# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ինմեդ ՍՊԸ-ն ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-27/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 27 | Խարիսխային համակարգ | Դաբլ Մեդիքալ (DM) | Դաբլ Մեդիքալ (DM) | Խարիսխը պետք է լինի իմպլանտացվող, մետաղական՝ տիտանային համաձուլվածքից, պատրաստված, պարուրակավոր (threaded) կոնստրուկցիայով, որը պետք է ապահովի ոսկրային հյուսվածքում կայուն առաջնային մեխանիկական ֆիքսացիա և դիմադրություն քաշող ուժերի նկատմամբ: Խարիսխը պետք է համալրված լինի բարձր ամրության, չներծծվող, կենսահամատեղելի ՈՒԲՄԽ (Ultra-High-Molecular-Weight Polyethylene) հիմքով 2հատ 950մմ երկարությամբ կարանյութ: Համակարգը պետք է նախատեսված լինի ջիլ–ոսկր, կապան–ոսկր կամ հոդաշրթունք–ոսկր ֆիքսացիայի համար և հնարավորություն տա իրականացնել փափուկ հյուսվածքի կայուն անատոմիական վերաֆիքսացիա: Իմպլանտի նյութը՝ բժշկական նշանակության տիտան/տիտանային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համաձուլվածք ։ Կարաթելի նյութը՝ ՈՒԲՄԽ բարձր ամրության չներծծվող կենսահամատեղելի նյութ։ Խարիսխի արտաքին մակերեսը պետք է ունենա ոսկրային ֆիքսացիայի համար նախատեսված պարուրակավոր երկրաչափություն, որն ապահովում է խարիսխի ներմուծում ոսկրային հյուսվածքի մեջ և նվազեցնում է իմպլանտի հետքաշման (pull-out) ռիսկը։ Խարիսխի ծայրին առկա են 2 անցք լրացուցիչ թելերի համար։ Կոնստրուկցիան պետք է ապահովի կարաթելի հուսալի ինտեգրումը խարիսխին և վիրահատության ընթացքում կարաթելի մեխանիկական ամբողջականության պահպանումը։ Պահանջվող չափերն են Ø3.0 × 14 մմ և Ø5.3 × 14 մմ Արտադրանքը պետք է մատակարարվի ստերիլ, մեկանգամյա օգտագործման, անհատական գործարանային փաթեթավորմամբ, պատրաստ անմիջական վիրաբուժական օգտագործման համար։ Փաթեթավորման վրա պետք է առկա լինեն արտադրանքի նույնականացման և հետագծելիության համար անհրաժեշտ տվյալները՝ REF/կատալոգային համար, LOT/խմբաքանակի համար, արտադրության ամսաթիվ և/կամ պիտանելիության ժամկետ, ստերիլության վերաբերյալ նշում։ Պարտադիր պայման է CE MARK որակի վկայականի առկայությունը, արտադրողի կողմից տրվող համապատասխանության հավաստագրի (ավտորիզացիոն նամակի) և ծագման սերտիֆիկատի առկայությունը։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Инмед в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄԲՉ-ԷԱՃԱՊՁԲ-27/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 27 | | | | |